

Այստեղ նկատուում է մի հայ եկեղեցու անհրաժեշտութիւնը:
Պ՛գբեր պէտք է մտածեն այդ մասին:

ՕՐ. ՆՈՒԱՐԴԻ ԱՂԱՆԵԱՆՑ

Ս. ԷԶՄԻԱՅՆԻ ՄԻՆՕԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ.

„КАЗНАЗ“ լրագիրը հաղորդում է, որ ներկայ օգոստոսի 19-ին Բարձրագոյն բարեհաճութեամբ Ս. Էջմիածնի Սինօդի անդամութիւնից արձակուում են դէր. Տ. Մակար եպս. Բարխուդարեանց և Տ. Մխիթար վրդ. Տէր-Մկրտչեան համաձայն իրանց խնդրի հիւանդութեան պատճառով: Լ նշանակուում են նոր անդամներ դէր. Տ. Յովհաննէս եպիսկոպոս Շիրակունի, Տ. Յուսիկ վրդ. Զոհրաբեան, Տ. Մատթէոս վրդ. Մատթէոսեան և Տ. Բարդէն վրդ. Աղաւելեան:

ՏԵՍԱԿԱՆ ԵՐԱԺՃՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ Պ. ԲՈՒՐԳՈՒՄ.

Մեզ խնդրում են հաղորդել, որ այս օգոստոս ամսից ներքին Դործոց նախարարութեան թղյտուումութեամբ բացուել են Պ. Բուրգում Ս. Աբրահամովի ճեշական երաժշտական դասընթացները: Յիշեալ դասընթացները բացի տեղական նշանա. կութիւնից նպատակ ունին հնարաւորութիւն տալ գաւառացի. ներին, օր. դպրոցական ուսուցիչներին, խմբապետներին, երա. ժշտական խմբերի ղեկավարներին, երաժշտութեան ուսուցիչներին, նոյնպէս և աշխարհիկ և կրօնական երաժշտութեան սի. րողներին և ձայնագրագէտներին, առանց իրանց գործին վնա. տելու, դասընթացների հետ գրադրութեամբ անցնել կամ լրաց. նել իրանց երաժշտական տեսական պարգացումը. ուղարկելով իրանց աշխատութիւնները դասընթացներին ստուգելու և սխալները ուղղելու: Դասախօսութիւնները ուսանողներին ու. ղարկուում է ձրի: Ուղղուած աշխատութիւնները ուղարկուում են վերադիր վճարով: Ուսուցման վճարը նշանակուած է բաւական արժան, օր. ժողովրդական ուսումնարանների ուսուցիչները ամ. ժական վճարում են 2 բուրլի:

ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՑՓՈՒՄԱՆ

Անցեալ յուլիս ամսին Վանքի ծխականների բաղմամարդ ժողովը գրեթէ միաձայն երեցփոխան ընտրեց նոյն եկեղեցու
ԼՈՒՄԱՑ

համար՝ քաղաքային յայտնի և գործունեայ իրաւասու ինժեներ-մեխանիկ Սրշակ Ս. Բարեանին: Վաղուց է, որ վանքի եկեղեցին կարօտում էր մի այդպիսի եռանդուն և շնորհալի երեսգիտխանին: Հշմարիտ է, մի երկու տարի առաջ եկեղեցին յայսանի բարեգործ պ. Ա. Մանթաշեանի առատաձեռն նուիրարբուծեամբ ներսից չքեղապէս նորոգուեցաւ, բայց ներկայումս դարձեալ կարօտ է նա մեծ նորոգութեան և մեծամեծ պակասութիւններ ունի: Միականները այդ ծանր պարտաւորութիւնը դրին նորընտիր երեսգիտխանի վերայ և չսխալուեցան: Պ. Բարեանը, թէպէտ և մինչև այժմ ոչինչ չէ ստացել իւր նախորդից, սակայն կազմել է կարևոր նորոգութիւնների նախահաշիւը և արդէն կատարել է մի քանի կարևոր և անհրաժեշտ նորոգութիւններ, մինչև հիմնական նորոգութեան ձեռնարկելը: վերացրել է եկեղեցում գտնաւորուած քարեկաշիւերը, կարգի է դրել եկեղեցու արդիւնքների ստացումը և այլն և այլն: Ցանկանում ենք նորան ամենայն յաջողութիւն:

ՆԱՄԱԿ ՀՈՒԼԱԻԵՐԻՑ

Մեր զիւղը իւր հիմնուելու օրից ոչ մէկի պնքան պարտական չէ, որքան Ռոմանոս Նաղիբեանցին, որ գեռ 1859 թ. իւր ծննդավայրում առաջին անգամ դպրոցի շէնք կառուցեց և երեք ուսուցիչների ծախքը հոգայով երկար տարիներ պահեց: Դասական իրերն անգամ աշակերտներն ստանում էին ձրի: Գիւղի զրազէտները ամենն էլ նրա սաներն են, որոնցից մի քանիսը Թիֆլիզում այժմ յայտնի են իբրև առևտրականներ և զրազէտներ: Ռոմանոսը իւր գործունէութեամբ իբրև զրազէտների մեկենաս նշանաւոր էր իւր ժամանակ. իւր առատաձեռնութեան պատճառով յայտնի էր Թիֆլիզում ըարերարմականում. ներսիսեան դպրոցի եռանդուն հոգարարձուն էր և 60ական թ. հայ Թատրօնի հիմնադիրներից մինը: Այդ նշանաւոր ազգայինը 1882 թ. վախճանուած և թաղուած է տեղիս Ս. Մեսրոպ եկեղեցու բակում, ուր մի ժամանակ կանգնած էր նրա դպրոցի շէնքը: Մինչև օրս, այսինքն ողջ 22 տարի այդպիսի հանգուցեալի գերեզմանը մնացել է անշիւրիմ, ոտներէ տակ տրորուելիս, այն ինչ նրա ամուսինը յայտնի է իբրև Թիֆլիզի հարուստներից մինը և այժմ այդ քաղաքի մի եկեղեցու վերաշինութեան համար մտադիր է վեց հազար ծախսելու, բայց չգիտենք ինչո՞ւ պնտում է իւր անուանի ամուսնու գերեզմանի վրայ մի հասարակ բար զննելու: Ցեղիս եւրիասարգութիւնը այժմ նորա սաներից մէկի գրգմամբ ուղղում է հանդանակութիւն անել և ողջ գիւղի կողմից մի համեստ արձան կանգնեցնել Ռոման Պաւլիչի գերեզմանի վրայ: